ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆԸ

09 մարտի 2015 թվականի N 99-Ն

ՀՐԱՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ ՆԵՐՄՈՒԾՎՈՂ ՈՐՈՇ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՄԱՔՍԱՏՈՒՐՔԻ ՎՃԱՐՄԱՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 10-ի «Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծվող առանձին ապրանքների նպատակային նշանակությունը հաստատող և որոշ ապրանքների նկատմամբ մաքսատուրքի վճարման արտոնություններ տրամադրող Հայաստանի Հանրապետության լիազոր պետական կառավարման մարմիններ սահմանելու և Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծվող առանձին ապրանքների նպատակային նշանակությունը հաստատող եզրակացության տրամադրման կարգը հաստատելու մասին» N228-Ն որոշման 2-րդ կետի 3-րդ ենթակետի և 4-րդ կետի դրույթներով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել՝ Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարության իրավասության սահմաններում՝ մինչև 2015 թվականի հունվարի 1-ը կնքված Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի շրջանակներում (այդ թվում՝ այդ միջազգային պայմանագրերի շրջանակներում իրականացվող ծրագրերի՝ 2015 թվականի հունվարի 1-ից հետո իրագործման դեպքում)՝ նշված միջազգային պայմանագրերին համապատասխան և Հայաստանի Հանրապետության տարածքում ատոմային էլեկտրակայանի շինարարության և արդիականացման ու երաշխիքային ժամկետում շահագործման նպատակներով

Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծվող որոշ ապրանքների նկատմամբ մաքսատուրքի վճարման արտոնությունների տրամադրման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության պետին՝

ապահովել սույն հրամանի պետական գրանցումը Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունում:

3. Սույն հրամանի գործողությունը տարածվում է 2015 թվականի հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

4. Սույն հրամանի կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ղեկավարին:

ԵՐՎԱՆԴ ԶԱԽԱՐՅԱՆ

Հավելված
ՀՀ էներգետիկայի և բնական
պաշարների նախարարության 2015
թվականի մարտի 9-ի N 99-Ա
հրամանի

ԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ և ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ՝ ՄԻՆՉև 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 1-Ը ԿՆՔՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ (ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ԱՅԴ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԻ՝ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 1-ԻՑ ՀԵՏՈ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ)՝ ՆՇՎԱԾ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ և ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՏՈՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆԻ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ՈՒ ԵՐԱՇԽԻՔԱՅԻՆ ԺԱՄԿԵՏՈՒՄ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ ՆԵՐՄՈՒԾՎՈՂ ՈՐՈՇ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՄԱՔՍԱՏՈՒՐՔԻ ՎՃԱՐՄԱՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին միանալու վերաբերյալ պայմանագրի 41-րդ կետի ու 44-րդ կետի 3-րդ ենթակետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 10-ի N228-Ն որոշման 4-րդ կետի պահանջներին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծվող որոշ ապրանքների նկատմամբ մաքսատուրքի վճարման արտոնությունների տրամադրման հետ կապված հարաբերությունները:

2. Սույն կարգի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարության իրավասության սահմաններում մինչև 2015 թվականի հունվարի 1-ը կնքված Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի շրջանակներում (այդ թվում՝ այդ միջազգային պայմանագրերի շրջանակներում իրականացվող ծրագրերի՝ 2015 թվականի հունվարի 1-ից հետո

իրագործման դեպքում)՝ նշված միջազգային պայմանագրերին համապատասխան և Հայաստանի Հանրապետության տարածքում ատոմային էլեկտրակայանի շինարարության և արդիականացման ու երաշխիքային ժամկետում շահագործման նպատակներով Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծվող որոշ ապրանքների նկատմամբ մաքսատուրքի վճարման արտոնությունների տրամադրման վերաբերյալ տեղեկանքը (այսուհետև՝ տեղեկանք) տրվում է Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարության կողմից (այսուհետև՝ լիազոր մարմին):

3. Սույն կարգի համաձայն Հայաստանի Հանրապետություն ներմուծվող ապրանքների նկատմամբ մաքսատուրքի վճարման արտոնությունների տրամադրումը կիրառվում են ՝

1) Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարության իրավասության սահմաններում մինչև 2015 թվականի հունվարի 1-ը կնքված՝ ստորև նշված Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի շրջանակներում (այդ թվում՝ այդ պայմանագրերի շրջանակներում իրականացվող ծրագրերի՝ 2015 թվականի հունվարի 1-ից հետո իրագործման դեպքում)՝ այդ պայմանագրերին համապատասխան.

ա. Հայաստանի Հանրապետության և Իրանի Իսլամական Հանրապետության էներգետիկայի նախարարության միջև համագործակցության վերաբերյալ 2006 թվականի մայիսի 17-ին ստորագրված փոխըմբռնման հուշագրի հիման վրա «Իրան-Հայաստան 400 կՎ լարման էլեկտրահաղորդման օդային գծի կառուցում» ծրագիր:

բ. Հայաստանի Հանրապետության կառավարության և Իրանի Իսլամական Հանրապետության կառավարության միջև 2007 թվականի մարտի 19-ին ստորագրված Արաքս գետի վրա հիդրոէլեկտրակայաններ կառուցելու և շահագործելու բնագավառում համագործակցության մասին Համաձայնագիր:

2) Հայաստանի Հանրապետության տարածքում ատոմային էլեկտրակայանի շինարարության և արդիականացման ու երաշխիքային ժամկետում շահագործման նպատակներով՝ Հայաստանի Հանրապետության՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին միանալու վերաբերյալ պայմանագրի 44-րդ կետի 3-րդ ենթակետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 10-ի N228-Ն որոշման 4-րդ կետի դրույթների համաձայն.

ա. Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև՝ Հայաստանի Հանրապետության տարածքում

ատոմային էլեկտրակայանի նոր էներգաբլոկներ կառուցելու համար համագործակցության մասին 2010թ. օգոստոսի 20-ին ստորագրված Համաձայնագրով իրականացվող ծրագրի շրջանակներում,

բ. Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև՝ Հայկական ատոմային էլեկտրակայանի 2-րդ էներգաբլոկի շահագործման ժամկետի երկարաձգման հարցում համագործակցության մասին 2014թ. դեկտեմբերի 20-ին ստորագրված համաձայնագրով իրականացվող ծրագրի շրջանակներում:

4. Տեղեկանք ստանալու համար ներմուծող անձը (այսուհետ՝ հայտատու) լիազոր մարմին է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝

1) դիմում՝ համաձայն N 1 ձևի.
2) պայմանագիր,
3) ներմուծվող ապրանքի հաշիվ-ապրանքագիրը,

5. Լիազոր մարմինը, հայտատուի ներկայացրած փաստաթղթերի հիման վրա, երեք աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում է տեղեկանք (երկու բնօրինակից)՝ համաձայն N 2 ձևի:

6. Տեղեկանք ստանալու մասին դիմումը լիազոր մարմնի կողմից մերժվում է, եթե դիմումը և կից ներկայացվող փաստաթղթերը թերի են, և հայտատուն երեք աշխատանքային օրվա ընթացքում չի վերացնում դիմումում կամ կից փաստաթղթերում առկա թերությունները:

7. Տեղեկանք ստանալու համար ներկայացված դիմումի մերժման մասին որոշման ընդունումից հետո լիազոր մարմինը երկու աշխատանքային օրվա ընթացքում գրավոր (էլեկտրոնային եղանակով, փոստով կամ առձեռն) տեղեկացնում է հայտատուին՝ նշելով մերժման հիմքերը:

8. Հայտատուն տեղեկանքի տրամադրման մերժումը կարող է բողոքարկել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

9. Տեղեկանքը կորցնելու (ոչնչացվելու և այլն) դեպքում լիազոր մարմնի կողմից տրամադրվում է տեղեկանքի կրկնօրինակը, որի աջ անկյունում կատարվում է դրոշմակնքում՝ «Կրկնօրինակ» բառով:

10. Հայտատուի կողմից տեղեկանքի մեկ բնօրինակը ներկայացվում է մաքսային մարմիններին՝ համապատասխան ձևակերպումների համար:

ՁԵ N 1

ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն
(լիազոր մարմինը)

Դ Ի Մ Ո Ւ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ ՆԵՐՄՈՒԾՎՈՂ ՈՐՈՇ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՄԱՔՍԱՏՈՒՐՔԵՐԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՏԵՂԵԿԱՆՔ ՍՏԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիմող՝ _____
(իրավաբանական անձի անվանումը, անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը,
_____
հեռախոսահամարը և էլեկտրոնային հասցեն)

Գտնվելու վայրը՝ _____
(իրավաբանական անձի գտնվելու վայրը, անհատ ձեռնարկատիրոջ բնակության վայրը)

Իրավաբանական անձի պետական գրանցման համարը, անհատ ձեռնարկատիրոջ պետական հաշվառման համարը, ՀՎՀՀ_____

Ապրանքի անվանումը, ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ ծածկագիրը, քանակը_____

Խնդրում եմ տրամադրել տեղեկանք՝ Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծվող՝ վերը նշված ապրանքների նկատմամբ ներմուծման մաքսատուրքի արտոնությունների կիրառման վերաբերյալ:

Դիմումին կից ներկայացնում եմ
ա. պայմանագիրը
բ. ապրանքի ներմուծման հաշիվ-ապրանքագիրը

Հայտնում եմ, որ ներկայացված փաստաթղթերում առկա տվյալներն ամբողջական են և հավաստի:

Դիմող _____ _____
(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

____ _____ 20 թ.

Ձև N 2

ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն
(լիազոր մարմինը)

ՏԵՂԵԿԱՆՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ ՆԵՐՄՈՒԾՎՈՂ ՈՐՈՇ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՄԱՔՍԱՏՈՒՐՔԵՐԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայտատու՝ _____
(իրավաբանական անձի անվանումը, անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը,
_____
հեռախոսահամարը և էլեկտրոնային հասցեն)

Գտնվելու վայրը՝ _____
(իրավաբանական անձի գտնվելու վայրը, անհատ ձեռնարկատիրոջ բնակության վայրը)

Իրավաբանական անձի պետական գրանցման համարը, անհատ ձեռնարկատիրոջ պետական հաշվառման համարը, ՀՎՀՀ_____

Հաշիվ-ապրանքագրի համարը և ամսաթիվը _____

_____

Ապրանք՝ _____-ը
(ապրանքի անվանումը, ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ ծածկագիրը, քանակը)

ազատվում է Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծման մաքսատուրքի վճարումից:

Լիազոր մարմնի պաշտոնատար անձ՝ _____ _____
(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

____ _____ 20 թ.